ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. սեպտեմբերի 9 -ին, N 345 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 424-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 567-Ն որոշման և ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 1112-Ն որոշման պահանջները՝ որոշում եմ.

1. ՀՀ Արագածոտնի մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N 424-Ա որոշմամբ հաստատված «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Արագածոտնի մարզի «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում իրականացնել սույն որոշմամբ հաստատված նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 09.09.2024 09:35:19 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3369890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ